



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.




2024Թ.-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- **Համաշխարհային տնտեսություն.** սեպտեմբերին ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության անկումը և աճի տեմպի դանդաղումը պայմանավորված են եղել մշակող արդյունաբերության ոլորտի անկմամբ: Նավթի միջազգային գինը նվազել է, իսկ պղնձի և պարենի միջազգային գները՝ աճել:
- **Տնտեսության արտաքին հատված.** սեպտեմբերին արտահանման և ներմուծման աճի տեմպերը օգոստոսի նկատմամբ դանդաղել են: Նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ ՀՀ դրամը դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ արդեն երկրորդ ամիսն անընդմեջ դրսևորել է արժեզրկման վարքագիծ: Արժեզրկման չափը կազմել է համապատասխանաբար 0.1, 3.9, 5.7 տոկոս: ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է 9.2%-ով (օգոստոսին արձանագրվել էր 8.4% նվազում):
- **Տնտեսության իրական հատված.** տնտեսական ակտիվությունը սեպտեմբերին կազմել է 7.0%՝ օգոստոսի նկատմամբ արագանալով 1.4 տոկոսային կետով՝ պայմանավորված ծառայությունների և արդյունաբերության ճյուղերում աճերի արագացմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է 0.6%, միջին գնաճը զրոական է, իսկ բնականոն գնաճը փոքր-ինչ աճել է՝ կազմելով 0.7%:
- **Տնտեսության ֆինանսական հատված.** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ: Վարկերի ծավալների աճը կազմել է 21.1%, իսկ ավանդներինը՝ 10.8%: Ավանդների տոկոսադրույքները վերջին ամիսներին ցուցաբերել են նվազման դինամիկա, մինչդեռ վարկերի տոկոսադրույքները աճել են: Սեպտեմբերին, մեծապես պայմանավորված դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:
- **Տնտեսության հարկաբյուջերային հատված.** հարկային եկամուտների աճի տեմպը սեպտեմբերին կազմել է 12.7%, իսկ պետական բյուջեի ծախսերը աճել են 10.4%-ով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեն ձևավորվել է պակասուրդով՝ նախորդ տարվա համեմատական դիմաց:

1. Միջազգային զարգացումներ: Սեպտեմբեր ամսին համաշխարհային տնտեսական ակտիվությունը դանդաղել է՝ պայմանավորված մշակող արդյունաբերության ոլորտի անկմամբ: Միևնույն ժամանակ, ծառայությունների ոլորտը շարունակել է աճել և ոլորտների միջև տարամիտումը խորացել է: Սեպտեմբերին ԱՄՆ-ում գրանցված տնտեսական ակտիվության աճը, հիմնականում, պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի արագ աճով, իսկ մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է անկում: Երկու ոլորտներում էլ գրանցվել է զբաղվածության նվազում: Եվրագոտում գրանցվել է տնտեսական ակտիվության անկում՝ պայմանավորված մշակող արդյունաբերության անկմամբ: Անկումը, հիմնականում, պայմանավորված է պահանջարկի թուլացմամբ: Գրանցվել է զբաղվածության անկում, իսկ գործարար վստահությունը գրանցել է վերջին 11 ամիսների նվազագույն մակարդակը: Գերմանիան և Ֆրանսիան շարունակում են մնալ տարածաշրջանի թույլ զարգացումների հիմնական աղբյուրը: Սեպտեմբերին ՌԴ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության անկում՝ պայմանավորված մշակող արդյունաբերության ոլորտի անկմամբ և ծառայությունների ոլորտի աճի դանդաղմամբ: Չինաստանում տնտեսական ակտիվության աճը դանդաղել է՝ պայմանավորված մշակող արդյունաբերության անկմամբ և ծառայությունների ոլորտի աճի դանդաղմամբ: Զբաղվածության մակարդակն աճել է

ծառայությունների ոլորտում և կտրուկ կրճատվել է մշակող արդյունաբերության ոլորտում:


Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները



Սեպտեմբերին ԱՄՆ-ում գնաճի թուլացումը շարունակվել է՝ կազմելով 2.4% (օգոստոսին՝ 2.5%)՝ պայմանավորված էներգակիրների գնանկմամբ, ինչպես նաև պարենային ապրանքների և տրանսպորտի գնաճի դանդաղմամբ: Եվրագոտում նույնպես դիտվել է գնաճի թուլացում՝ պայմանավորված էներգակիրների գնանկմամբ և ծառայությունների գնաճի դանդաղմամբ. աճի ուղղությամբ հիմնականում նպաստել է սննդամթերքի գնաճի արագացումը: ՌԴ-ում գնաճի տեմպերը նախորդ ամսվա համեմատ թուլացել են՝ կազմելով 8.6%՝ հիմնականում, պայմանավորված ծառայությունների և պարենային ապրանքների գնաճով: Չինաստանում գրանցվել է 0.4% գնաճ՝ պայմանավորված ոչ պարենային ապրանքների գների նվազմամբ, մյուս կողմից սննդամթերքի գների կտրուկ աճ է գրանցվել:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից իրականացվող զսպող քաղաքականությունն աստիճանաբար գնում է մեղմացման ուղղությամբ, բացառությամբ ՌԴ-ի: Սեպտեմբեր ամսին ԱՄՆ ԴՊՀ կողմից քաղաքականության տոկոսադրույքն իջեցվել է 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 4.75-5.0 մակարդակում, ԵԿԲ-ն հունիսի նվազեցումից հետո սեպտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել է ևս 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 3.65% մակարդակում: Հոկտեմբերին ԵԿԲ տոկոսադրույքն իջեցրել է ևս 0.25 տոկոսային կետով: Չինաստանի բանկը հուլիսին 3.35% սահմանելուց հետո, սեպտեմբերին ևս պահպանել է քաղաքականության տոկոսադրույքի մակարդակը՝ պայմանավորված օգոստոսին գրանցված տնտեսական ակտիվության անորոշությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված էր մշակող արդյունաբերության թույլ աճով և գործազրկության բարձր մակարդակով: Անշարժ գույքի շուկայի խոցելիության և պահանջարկի խթանման նպատակով՝ սեպտեմբերին չինական կառավարության կողմից մեկնարկած ագրեսիվ խթանման միջոցառումների արդյունքում հոկտեմբերին տոկոսադրույքը նվազեցվել է 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 3.1%:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում







ՌԴ կենտրոնական բանկը շարունակել է պահպանել դրամավարկային քաղաքականության զսպող դիրքը՝ հուլիսին բարձրացնելով հիմնական տոկոսադրույքը 2 տոկոսային կետով, այնուհետև սեպտեմբերին 1 տոկոսային կետով՝ սահմանելով 19% մակարդակում: Սա պայմանավորված էր առաջարկը գերազանցող պահանջարկով, որն էլ խթանում էր գնաճի շարունակական աճը: Արդյունքում, հոկտեմբերին կենտրոնական բանկը տոկոսադրույքը բարձրացել է ևս 2 տոկոսային կետով՝ սահմանելով 21%:


Նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 8.1%-ով, պղնձի գինը աճել է 3%-ով և պարենի միջազգային գինը՝ նույնպես: Նավթի գների նվազումը պայմանավորված է եղել Չինաստանում նավթի պահանջարկի նվազմամբ և ՕՊԵԿ-ի կողմից արդյունահանման ծավալների մեծացման վերաբերյալ հայտարարությամբ: Սեպտեմբերին պղնձի միջազգային գնի աճը առավելապես պայմանավորված է եղել Չինաստանի կառավարության կողմից վարվող խթանող միջոցառումներով: Պարենային ապրանքների համաշխարհային գնի աճը պայմանավորված է եղել կաթնամթերքի, հացահատիկի, բուսական յուղի և շաքարավազի գների աճով:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. սեպտեմբերի արտահանման և ներմուծման աճի տեմպերը օգոստոսի նկատմամբ դանդաղել են: Սեպտեմբերին արտահանումն աճել է 38.9%-ով (նախորդ ամսվա աճը՝ 65%), որին ամենամեծ նպաստումն ունեցել է դեպի ԱՄԷ արտահանումը: Ներմուծումն աճել է 11.9% (նախորդ ամսվա աճը՝ 21.9%):


Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկները, մլն դոլար



Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա 9 ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազում: Սեպտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազումը


կազմել է 9.2%, որին ամենամեծ նպաստումն է ունեցել ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկների 24.5% նվազումը:

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը




Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. օգոստոսին ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազել են շուրջ 18.6%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 30.7% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը սեպտեմբերին դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ արժեզրկվել է: Մասնավորապես՝ սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.1%-ով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 5.7%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 3.9%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվությունը սեպտեմբերին կազմել է 7.0%՝ օգոստոսի նկատմամբ արագանալով 1.4 տոկոսային կետով՝ պայմանավորված ծառայությունների և արդյունաբերության ճյուղերում աճերի արագացմամբ: Արդյունքում՝ հունվար-սեպտեմբերին գրանցվել է տնտեսական ակտիվության 8.7% աճ: Արդյունաբերության՝ նախորդ տարվա նույն ամիսներից սկիզբ առած բարձր աճերը ապրիլ-հունիս ամիսներին կտրուկ տեմպերով դանդաղել են՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների՝ արտադրության աճի տեմպերի դանդաղմամբ, սակայն հուլիսից կրկին նկատվել է արդյունաբերության աճի տեմպի արագացման միտում՝ հիմնականում պայմանավորված սննդամթերքի արտադրության աճի տեմպի արագացմամբ: Չնայած վերջին ամիսների զարգացումներին՝ հունվար-սեպտեմբերին արդյունաբերությունը շարունակել է հանդիսանալ ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղերից մեկը (նպաստումը՝ 2.3 տոկոսային կետ)՝ զիջելով ծառայությունների

¹ 2024թ. ապրիլ ամսվա հաշվետվության ներկայացման ժամանակ ՀՀ ՎԿ-ն ճշգրտել է նախորդ երեք ամիսների արդյունաբերության արտադրանքի ծավալները՝ կապված տնտեսական գործունեության տեսակների 24 (հիմնային մետաղների արտադրություն) և 32 (արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում, այդ թվում՝ ոսկերչական արտադրանքի


արտադրություն) ծածկագրերով հատվածների միջև վերադասակարգման հետ, ինչով պայմանավորված վերանայվել են նաև նախորդ երեք ամիսների արդյունաբերության ցուցանիշները:




(նպաստումը՝ 3.0 տոկոսային կետ) և առևտրի (նպաստումը՝ 2.7 տոկոսային կետ) ճյուղերին: Շինարարության աճը ևս շարունակել է նպաստել տնտեսական ակտիվությանը (նպաստումը՝ 1.2 տոկոսային կետ):

Հունվար-օգոստոսի տվյալներով արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել հիմնային մետաղների արտադրության աճով, շինարարության աճն՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ բնակչության և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության աճերով, ծառայությունների աճը՝ հիմնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, իսկ առևտրի աճին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի աճը:

Գծապատկեր 3.1. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)



Գծապատկեր 3.2. SU3 և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)




Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.4%-ով՝ կազմելով 282,568 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 7.8%-ով՝ կազմելով 224,289 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 5.9%-ով՝ կազմելով 304,807 դրամ): Իրական աշխատավարձը 1.3% գնաճի պայմաններում աճել է 5.1%-ով:

Երկրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ գրանցվել է զբաղվածության նվազում (1.7%) և գործազրկության աճ (18.2%): Ընդ որում գործազրկության աճը հիմնականում տեղի է ունեցել զբաղվածության նվազման հաշվին, իսկ վերջինս էլ իր հերթին պայմանավորված է եղել ինքնազբաղվածության նվազմամբ: Արդյունքում, երկրորդ եռամսյակում գրանցվել է 13.8% գործազրկության մակարդակ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի ցուցանիշը գերազանցելով 2.1 տոկոսային կետով, զբաղվածության մակարդակը կազմել է 52.1%՝ նվազելով 1.8 տոկոսային կետով:

Օգոստոսին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 8.1%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ 4.7%-ով, կազմելով 758,827 մարդ՝ պայմանավորված հիմնականում առևտրի, շինարարության և կրթության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)




ՀՀ անշարժ գույքի շուկայում օգոստոս ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը հուլիսի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների

շուկայական միջին գների աճը հուլիսի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.5-ից 0.6% շրջանակներում, իսկ նախորդ տարվա օգոստոս ամսվա նկատմամբ՝ 6.5-ից 10.9% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 903,050 դրամ, աճը հուլիսի նկատմամբ՝ 0.3%, աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 7.5%), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 230,200 դրամ, աճը հուլիսի նկատմամբ՝ 0.5%, աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 6.6%): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը հուլիսի համեմատ տատանվել է -1.6-ից 3.1% շրջանակներում, իսկ նախորդ տարվա օգոստոս ամսվա նկատմամբ՝ -2.7-ից 19.1%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 448,100 դրամ, աճը հուլիսի նկատմամբ՝ 0.5%, աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 7.9%), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 26,500 դրամ, գինը հուլիսի նկատմամբ՝ անփոփոխ, աճը նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ՝ 6.0%):


4. Դրամավարկային քաղաքականություն: Սեպտեմբերին արձանագրվել է թույլ գնաճ: 12 ամսյա գնաճը կազմել է 0.6%, միջին գնաճը գրոական է, իսկ բնականոն գնաճը փոքր-ինչ աճել է՝ կազմելով 0.7%: Սեպտեմբերի 10-ին ՀՀ ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.5%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ամսական միջին)



Օգոստոսին 12 ամսյա գնաճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (1.2 տոկոսային կետ), ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների (0.2 տոկոսային կետ) դրական և սննդամթերքի (-0.4 տոկոսային կետ) ու ոչ պարենային ապրանքների (-0.4 տոկոսային կետ) բացասական նպաստումների հակակշռմամբ:

Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ




5. Ֆինանսական միջնորդություն: Սեպտեմբերին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (21.1%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (10.8%): Ընդ որում, ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 23.2%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 12.3%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել հիփոթեքային (նպաստումը՝ 6.4 տոկոսային կետ, աճը՝ 27.6%), սպառողական (նպաստումը՝ 5.7 տոկոսային կետ, աճը՝ 23.7%) և շինարարության (նպաստումը՝ 3.8 տոկոսային կետ, աճը՝ 37.2%) վարկերը: Տնտեսության մյուս ոլորտների վարկավորումը (այդ թվում՝




արդյունաբերության) ևս աճում է բարձր տեմպերով, ընդ որում արդյունաբերության վարկերի աճին ամենամեծ նպաստումն են ունեցել հանքագործական արդյունաբերության ոլորտի վարկերը, մինչդեռ մշակող արդյունաբերությանն ուղղվող վարկերի նպաստումը փոքր բացասական է: Առաջանցիկ վարկավորման պայմաններում ավանդների և վարկերի ծավալների դրական տարբերությունը շարունակում է նվազել՝ կազմելով 89.2 մլրդ դրամ (2022թ.-ի վերջին այդ տարբերությունը կազմել էր 913 մլրդ դրամ, 2023թ.-ի վերջին՝ 527 մլրդ դրամ): Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 75.9 մլրդ դրամով (5.9% աճ)՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել պատմականորեն բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 490 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ պետական պարտատոմսերի և ավանդների տոկոսադրույքները սեպտեմբերին որոշակի նվազել են, մինչդեռ վարկերի դեպքում նկատելի է հակառակ միտումը: Սեպտեմբերին, մեծապես պայմանավորված դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (1 տարանոց պետական պարտատոմսերի տոկոսադրույքը կազմել է 9.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 10.3%-ի համեմատ, իսկ 10 տարանոց պետական պարտատոմսերինը՝ 9.7%՝ 10.2%-ի համեմատ): Ավանդների տոկոսադրույքները վերջին ամիսներին ցուցաբերել են նվազման որոշակի դինամիկա: Վարկերի տոկոսադրույքները աճել են՝ կազմելով 13.7% (2023թ.-ի սեպտեմբերին՝ 12.7%), ինչը մեծապես պայմանավորված է մինչև մեկ տարի ժամկետով իրավաբանական անձանց վարկերի տոկոսադրույքների աճով՝ 12.6% (2023թ.-ի սեպտեմբերին՝ 11.5%): Հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները վերջին ամիսներին կայուն են եղել:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %




6. Հարկաբյուջետային հատված²: Սեպտեմբեր ամսին աճել են պետական բյուջեի և՛ եկամուտները, և՛ ծախսերը, սակայն եկամուտների աճը առաջանցիկ է ծախսերի համեմատ: Սեպտեմբեր ամսին պետական բյուջեի եկամուտները կազմել են 236.4 մլրդ դրամ (աճը՝ 14.4%), իսկ ծախսերը՝ 224.8 մլրդ դրամ (աճը՝ 10.4%): Ծախսերն ընդգրկել են 178.0 մլրդ դրամի ընթացիկ ծախսեր և 46.8 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա սեպտեմբեր համեմատ աճել են 10.9%-ով, իսկ կապիտալ ծախսերն աճել են 7.4%-ով:

² Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար:

2024թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1,860.4 մլրդ դրամը (աճը՝ 6.6%), իսկ ծախսերը՝ 1,933.4 մլրդ դրամ (աճը՝ 15.7%):


ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին որոշակիորեն արագացել է: 2024թ.-ի սեպտեմբերին հարկային եկամուտները կազմել են 219.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա սեպտեմբերի նկատմամբ աճելով 12.7%-ով (օգոստոսի աճի համեմատ արագանալով 2.3 տոկոսային կետով): 2024թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1,767.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.8 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %




Սեպտեմբեր ամսվա հարկային եկամուտներում բոլոր հարկատեսակների գծով աճեր են գրանցվել: Համեմատաբար բարձր նպաստումներ են արձանագրել բնապահպանական և բնօգտագործման վճարները (2.8%-ային կետ), եկամտային հարկը (2.7%-ային կետ), ակցիզային հարկը (1.3%-ային կետ), ավելացված արժեքի հարկը (1.3%-ային կետ) և պետական տուրքը (0.8%-ային կետ):

Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն հունվար-սեպտեմբեր ամիսներին եղել պակասուրդային: Չնայած որ սեպտեմբեր ամսին եկամուտները ծախսերին գերազանցել են 11.6 մլրդ դրամով, հունվար-սեպտեմբեր ամիսներին ձևավորվել է պակասուրդային բյուջե. պակասուրդը կազմել է 73.0 մլրդ դրամ: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը կազմել էր 74.6 մլրդ դրամ: